ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սամվել Վանյանի՝ Իտալիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սամվել Վանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

2022 թվականի սեպտեմբերի 18-22-ը Իտալիայի Հանրապետության Միլան և Ալբա քաղաքներ

4. Հրավիրող կողմը՝

Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն (UNWTO) և Իտալիայի կառավարություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն ՄԱԿ ԶՀԿ-ի գինու զբոսաշրջության 6-րդ գլոբալ համաժողովին:

- գինու զբոսաշրջության համաշխարհային փորձի ուսումնասիրում,
- Հայաստանում գինու զբոսաշրջային առաջարկի զարգացման հեռանկարների բացահայտում,
- Հայաստանի՝ որպես գինու հնագույն օրրանի ճանաչելիության բարձրացում, մասնավորապես՝ Եվրոպայի տարածաշրջանում Հայաստանի դիրքերի ամրապնդում,
- Հայաստանի համար թիրախային շուկա հանդիսացող ՄԱԿ ԶՀԿ անդամ Եվրոպական երկրների ոլորտի պատասխանատուների հետ գինու

զբոսաշրջության ոլորտում համագործակցության զարգացմանն ուղղված առկա ծրագրերի, համագործակցության հնարավորությունների քննարկում, ինչպես նաև գործընկերային կապերի ձևավորում:

6. Քննարկված թեմաները՝

Այս տարի ՄԱԿ ԶՀԿ-ի գինու զբոսաշրջության գլոբալ համաժողովը ներառում էր հետևյալ հիմնահարցերի շրջանակը՝

- Ո՞րն է նորարարության դերը գինու զբոսաշրջության ապագայում:
- Ինչպե՞ս կարող է գինու զբոսաշրջությունը ավելի կայուն լինել:
- Որո՞նք են թվային և սոցիալական հնարավորությունները՝ բարձրացնելու գինու զբոսաշրջության արժեքը:

Թվայնացումն ու էլեկտրոնային առևտրի սրընթաց զարգացման տեմպերը, նոր տեխնոլոգիաների ներմուծումը նաև զբոսաշրջության՝ մասնավորապես գինու զբոսաշրջության ոլորտ առանցքային և կարևոր են դարձնում:

Համաժողովի ընթացքում քննարկվեց փորձառությունների ստեղծման, շուկայավարման և գործընկերության գործընթացներում նորարարության ընձեռած հնարավորությունները:

Միաժամանակ քննարկվեց նորարարության միջոցով կայունության ապահովման պայմանները՝ հաշվի առնելով, որ կայունությունն առանցքային պայման է դառնում այգիների, տեղական զբոսաշրջային ռեսուրսների երկարաժամկետ և անվտանգ օգտագործումն ապահովելու համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ավելի քան 30 միջազգային բանախոսների մասնակցությամբ կոնֆերանսի առանցքում գինու զբոսաշրջության ապագայում նորարարության դերն էր. ինչպե՞ս կարող է գինու զբոսաշրջությունը ավելի կայուն լինել և ինչպիսի՞ հնարավորություններ կան թվային և սոցիալական ոլորտներում՝ որոնք հնարավորություն կստեղծեն գինու զբոսաշրջության արժեշղթայի մեծացման և տեղի բնակչության համար արժեքի ստեղծման:

Բանախոսների ցանկում էին՝ Wine Future և Green Wine Future ծրագրի տնօրեն Դեյվիդ Ֆյուրերը, Slow Food-ի հիմնադիր Կառլո Պետրին, Food & Wine Studio-ի խոհարար և ՄԱԿ ԶՀԿ-ի գաստրոնոմիական զբոսաշրջության դեսպան Պիլար Ռոդրիգեսը, WINERIST պարբերականի համաշխարհային արտադրանքի ղեկավար Մարտին Հոքը, Alle Wine-ի գործադիր տնօրեն և հիմնադիր Անտոնիո Պե-Կուրտոն, the.wine.girl-ի հիմնադիր Յանա Կրեյլեն և մի շարք այլ միջազգային ոլորտային փորձագետներ:

Միջոցառման ընթացքում ոլորտի 300 մասնագետների, առաջատար փորձագետների և պետական ոլորտի ներկայացուցիչների համար կազմակերպվել էին կենդանի բանավեճեր, ելույթներ, աշխատաժողովներ:

Տեղի ունեցավ բարձր մակարդակի պանելային քննարկում գինու զբոսաշրջության ապագայի վերաբերյալ, որի ընթացքում քննարկվեց գինու զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ քաղաքականությունները և գործողությունները:

Պանելային քննարկմանը մասնկացում էին՝ Բուլղարիայի զբոսաշրջության նախարարը, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարը, Հունաստանի զբոսաշրջության փոխնախարարը, Իտալիայի զբոսաշրջության նախարարը, Մոլդովայի մշակույթի նախարարը, Պորտուգալիայի զբոսաշրջության, առևտրի և ծառայությունների պետական քարտուղարը, Սան Մարինոյի զբոսաշրջության, փոստի, համագործակցության և ցուցահանդեսների նախարարը և Սերբիայի առևտրի, զբոսաշրջության և հեռահաղորդակցության նախարարը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ելնելով ՄԱԿ ԶՀԿ-ի գինու զբոսաշրջության 6-րդ գլոբալ համաժողովի ձևաչափի առանձնահատկությունից՝ համաժողովի ընթացքում Հայաստանի մասնակցությամբ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել և պաշտոնական պայմանավորվածություններ կամ որոշումներ չեն կայացվել:

Ոչ պաշտոնական հանդիպումներ են տեղի ունեցել Wine Future և Green Wine Future ծրագրի տնօրեն Դեյվիդ Ֆյուրերի, WINERIST պարբերականի համաշխարհային

արտադրանքի ղեկավար Մարտին Հոքի, Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից ժամանած գինու զբոսաշրջության լրագրողների, նորահայտ, զարգացող գինու ուղղություններով հետաքրքված պորտուգալացի և շվեդ մասնագետների հետ: Վերջիններիս տրամադրվեցին նյութեր հայկական գինեգործության, գինու զբոսաշրջության վերաբերյալ, ինչպես նաև քննարկվեց հետագա համագործության հեռանկարներն ու հնարավորությունները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՄԱԿ ԶՀԿ-ի գինու զբոսաշրջության 6-րդ գլոբալ համաժողովի ընթացքում մասնակցել եմ 30 միջազգային բանախոսների ելույթներին, պանելային քննարկումներին:
Վերջիններիս ընթացքում քննարկվել են գինու զբոսաշրջության ոլորտում նորարարության, նոր՝ մասնավորապես թվային տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները, կայուն զարգացման ապահովման պայմանները, գինու զբոսաշրջության քաղաքականության մշակման հաջողված համաշխարհային օրինակները, գինու զբոսաշրջության արժեշղթայի մեծացման և արժեշղթայում տեղական ներուժի ավելի շատ ներգրավման հնարավորությունները և այլն:

Համաժողովին մասնակցության արդյունքում ավելի շոշափելի դարձան Հայաստանում գինու զբոսաշրջության զարգացման իրական ներուժը, ոլորտի բացերը, զարգացման ենթակա ուղղություններն ու մրցակցային առավելությունները:

Ըստ այդմ՝ Զբոսաշրջության կոմիտեի նախագահին ներկայացվել են հետևյալ առաջարկները՝

- նախաձեռնել գինու զբոսաշրջության ռեսուրսների, ենթակառուցվածքների քարտեզագրման գործընթացը,
- նախաձեռնել գինու զբոսաշրջության կլաստերների ձևավորման առաջարկի մշակումը,
- նախաձեռնել գինու զբոսաշրջության երթուղու մշակումը՝ շեշտը դնելով հատկապես հեռավոր տարածաշրջանների վրա՝ ներառելով երկրի գինեգործական բոլոր շրջանները

- նախաձեռնել գինու զբոսաշրջության փորձառությունների խթանման նախագծերի ներդնումը (ինչպես օրինակ՝ նորարական ծրագրերի մասնակի ֆինանսավորումը/աջակցությունը և այլն)
- նախաձեռնել զբոսաշրջության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում փորձառությունների, մասնավորապես՝ գինու զբոսաշրջության փորձառությունների ոլորտը կարգավորող չափանիշների ներառումը

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՍԱՄՎԵԼ ՎԱՆՅԱՆ

27.09.2022